ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«28» 11 2025 թ.

№ պեւՈԴ2/2107

«Դասո Պրինտ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 00022766
ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 198 Ա
հեռ. 055 981114
էլ. հասցեն՝ accounting@cprint.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերության միջև 10.02.2025թ. կնքված N ԳՀԾՁԲ-25-8/5-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 29.04.2025թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությունը մինչև 28.06.2025թ.-ը պետք է ծառայության արդյունքում 1-ին չափաբաժնի մասով մատակարարեր 10000 հատ «Զինվորի աղոթագիրք», որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերության կողմից ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ (մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին, ինչպես նաև խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. նոյեմբերի 28-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 13,104 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 03.11.2025թ. և 1,440 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն):

Միաժամանակ հաշվի առնելով, որ առկա է թվով 2 արձանագրություն (N1 առ 14.08.2025թ. և N2 առ 06.10.2025թ.), որոնց համաձայն «Զինվորի աղոթագիրք» ապրանքատեսակը պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է պայմանագրի 5.2 կետի համաձայն ենթակա է գանձման ևս 2,880 ՀՀ դրամ:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 30,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 45,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. դեկտեմբերի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 30,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 45,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. դեկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ